ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՆԻ ԵՎ ԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ծածկագիր՝ Q-ARM-2024-0032-OT-1

ք. Երևան 22 մայիսի, 2026թ.

Սույնով «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ «Շեն» ԲՀԿ) հայտարարում է մրցույթ գյուղատնտեսական սրսկիչ դրոնի (agricultural spraying drone) և կից սարքավորումների գնման նպատակով:

Գնումն իրականացվելու է գերմանական «Հաց աշխարհի համար» (Brot für die Welt) կազմակերպության կողմից ֆինանսավորվող Գյուղատնտեսական դրոնների ներդրման պիլոտային ծրագրի շրջանակում:

1. Մրցույթի անհրաժեշտ պայմաններ

Մրցույթին կարող են մասնակցել գյուղատնտեսական դրոնների ներկրմամբ և վաճառքով զբաղվող բոլոր ընկերությունները, որոնք սնանկ չեն ճանաչվել կամ չեն գտնվում սնանկության վարույթում, չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, որի համար պատկան մարմինների կողմից նախաձեռնվել է վարույթ:

2. Ձեռք բերվող գյուղատնտեսական դրոնի և կից սարքավորումների նվազագույն տեխնիկական պահանջներ

Գյուղատնտեսական դրոնը և կից բոլոր սարքավորումները պետք է լինեն նոր՝ չօգտագործված վիճակում:

Գյուղատնտեսական դրոնի և կից սարքավորումների նվազագույն տեխնիկական նկարագիրը ներկայացված է ստորև.

	Անվանում	Տեխնիկական նկարագիր	Պահանջվող քանակ
1.	Դրոն	• Հեղուկացրման բաքի նվազագույն տարողություն՝ 40 լիտր: • Նվազագույն հոսքի արագություն՝ 16 լ/րոպե, կարգավորելի մինչև 24 լ/րոպե: • Կարգավորվող կաթիլների չափեր՝ 50-500 մկմ միջակայքում: • Կարգավորելի՝ լրացուցիչ ցողիչների ավելացման համար:	1
2.	Մարտկոց	• Նվազագույն հզորությունը՝ 30.000 մԱժ: • Նվազագույն պաշտպանության աստիճան՝ IP54:	3

ՀՀ, ք. Երևան 0001
110 Նալբանդյան փ.
+374 60 499 010
info@shen.am
www.shen.am

3.	Մարտկոցի լիցքավորիչ	• Լիցքավորման նվազագույն ելքային հզորություն՝ 8.000 Վտ.	1
4.	Պարարտա-նյութերի ցրիչ	• Համատեղելի հատիկների տրամագիծը՝ 0.5–5 մմ: • Բաքի նվազագույն բեռնատարողություն՝ 50 կգ:	1
5.	Բենզինային գեներատոր	• Տեսակը՝ ինվերտորային: • Մշտական հոսանքի լիցքավորման ելք՝ կարգավորվող լարման: միջակայք 42–59.92 Վ: • Առավելագույն ելքային հզորությունը՝ ոչ պակաս, քան 9.000 Վտ: • Շարժիչի առավելագույն հզորությունը՝ 12.000 Վտ : • Նվազագույն բենզինի բաքի տարողունակությունը՝ 30 լիտր:	1
6.	Պրոպելլերների ամբողջական հավաքածու	• Հավաքածուն պետք է ներառի՝ – Երկու զույգ թևեր վերին շարժիչի, ժամացույցի սլաքի ուղղությամբ պտույտի համար; – Երկու զույգ թևեր վերին շարժիչի, ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ պտույտի համար; – Երկու զույգ թևեր սրորին շարժիչի, ժամացույցի սլաքի ուղղությամբ պտույտի համար; – Երկու զույգ թևեր սրորին շարժիչի, ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ պտույտի համար: • Առաջարկվող մոդելի հետ համատեղելի:	1
7.	Ատոմիզացնող ցողիչների հավաքածու	• Կարգավորվող կաթիլների չափեր՝ 50-500 մկմ միջակայքում:	1

3. Գինը

Գյուղատնտեսական դրոնի և կից սարքավորումների գինը պետք է ներկայացնել ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի:

4. Վավերականությունը

Ներկայացված գնառաջարկը պետք է վավեր լինի ներկայացման պահից առնվազն մեկամսյա ժամկետում:

ՀՀ, ք. Երևան 0001
110 Նալբանդյան փ.
+374 60 499 010
info@shen.am
www.shen.am

1. Գյուղատնտեսական դրոնի և կից սարքավորումների մատակարարման ժամանակացույցը

Գյուղատնտեսական դրոնի և կից սարքավորումների մատակարարումը պետք է իրականացվի պայմանագրի կնքումից ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում:

2. Առաջարկի ներկայացման կարգը

Մրցույթի հայտով ներկայացվող գնառաջարկը և առաջարկվող գյուղատնտեսական դրոնի և կից սարքավորումների տեխնիկական նկարագիրը բնութագրող փաստաթուղթը անհրաժեշտ է ներկայացնել shovhannisyan@shen.am էլեկտրոնային հասցեով, նամակի թեմայի դաշտում նշելով՝ **Գնառաջարկ-Գյուղատնտեսական դրոն**:

Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետն է 05.06.2026թ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Հասցե՝ «Շեն» ԲՀԿ, Նալբանդյան 110

Հեռախոս՝ 060 499-005

Էլ-փոստ՝ shovhannisyan@shen.am

3. Մրցույթի հաղթողի ընտրության կարգը

Հաղթող կճանաչվի մրցույթի հրավերում նշված նվազագույն տեխնիկական պահանջներին բավարարող և նվազագույն գին/տեխնիկական հագեցվածություն (կոմպլեկտավորում) ներառող առաջարկը:

Հարգանքով՝

«Շեն» ԲՀԿ